«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը, ինքնաստուգում և ինքնավերահսկում

Հարցը՝ Ինչպե՞ս կազմակերպել ինքնուրույն աշխատանք

Կատարող՝ Լուսինե Մակիչյան

Ուսումնական հաստատություն՝

Ն.Վ. Գոգոլի անվան թիվ 35 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 2
ԳԼՈՒԽ1. Ներածություն ..... **Error! Bookmark not defined.**
ԳԼՈՒԽ 2.Սովորողների մեջ ինքնուրույնության ձևավորումը .... **Error! Bookmark not defined.**
ԳԼՈՒԽ 3. Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը .... **Error! Bookmark not defined.**
ԳԼՈՒԽ 4. Ինքնուրույն աշխատանքի ստուգման ձևերն ու հնարները 15
Գրականության ցանկ 16

Ներածություն

Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը, ինքնաստուգումն ու ինքնավերահսկումը արդիական է և ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի, քանի որ ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Աշակերտի ինքնուրուան գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներումի Ինքնուրույն սովորել սովորեցնելը այսօր նաև պետության կողմից իջեցված կրթական չափորոշային պահանջ է: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպասակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական է: Ժամանակակաից աշխարհի պայմաններում այն ավելի քան երբևէ ակտուալ է, քանի որ ներառում է դպրոցականների ոչ միայն անձնային զարգացման և նրանց անկախության ձևավորման, այլև մատաղ սերնդի ստեղծագործական դաստիարակությայն խնդիրները: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սովորողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման խնդիրը նոր չէ: Տարբեր ժամանակներում այդ խնդրներով զբաղվել են մանկավարժության պրակտիկայի երախտավորները: Այսպես, օրինակ, գիտական մանկավարժության հիմնադիր Յ Ա Կոմենսկին գրել է. «Մեր դիդակտիկայի ալֆան և օմեգան կդառնա այն եղանակի որոնումն ու հայտնագործումը, որի ժամանակ ուսուցանողը քիչ սովորեցնի, իսկ ուսուցանվողը շատ սովորի»1: Այդ կապակցությամբ էլ ուշագրավ մտքեր է հայտնել նաև ռուս մեծ մանկավարժ Կ Դ Ուշինսկին: Նա պահանջում էր ուսուցումը այնպես կազմակերպել, որպեսզի «Սովորողները հնարավորին չափ սովորեն ինքնուրույնաբար, իսկ սովորեցնողը ղեկավարի այդ ինքնուրույն աշխատանքը»: Սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման անհրաժեշտությունը ընդգծել են նաև հայ մանկավարժները՝ Խ Աբովյանը, Ղ Աղայանը, Առ. Բահաթրյանը և ուրիշներ: Այժմ բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, այդ թվում նաև նկատվում է զարգացում կրթական համակարգում: Եվ անհրաժեշտ է աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն: Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնային որակ է:

Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է:

Ուսուցիչը միշտ պիտի աշխատի զարգացնել աշակերտների ինքնագործունեությունը: Նա երբեք չպիտի ինքը գործե, ինքը ասե, կամ նկարե, կամ գրե այն, ինչը կարող է անել աշակերտը: Նա երբեք չպիտի ուղղե ինքը, քանի որ չի փորձել, թե արդյոք աշակերտը չի՞ կարող ինքն իրեն օգնել, կամ մի ուրիշը չի՞ կարող յուր տեղը բռնել»:

Ա.Բահաթրյան

Դասը հանդիսանում է ուսաումնական գործընթացի կազմակերպման հիմնական ձևը: Դրա ստեղծագործական կառուցվածքից է կախված աշակերտների գիտելիքների արդյունքը: Դասի ընթացքում դրվում է հաշվողական գիտելիքներիհիմքը, տրամաբանական մտածողության զարգացումը, տեղի է ունենումուսուցչի և յուրաքանչյուր աշակերտի միջև յուրօրինակ երկխոսություն:

Որպեսզի դասերը լիարժեք լինեն, անհրաժեշտ է ստեղծագործական մթնոլորտ: Փորձըցույց է տալիս, որ կարևոր է աշակերտի մոտ զարգացնել վարժությունն ինքնուրույն կատարելու ցանկություն, ձևավորել ճանաչողության նկատմամբ ձգտում, սեփական ճանաչողական գործունեության ղեկավարման կարողություն :

Տարրական դասարաններում ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում աշակերտները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն առանց ուսուցչի անմիջական մասնակցության:

Ինքնուրույն աշխատանքը ուսուցման այնպիսի մեթոդ է, որի ընթացքում աշակերտները ուցուցչի հանձնարարությամբ և նրա հսկողության ներքոինքնուրույն կատարում եմ ուսումնական առաջադրանքը՝ ցուցաբերելով ջանքեր և ակտիվություն: Հաճախ որպեսինքնուրույն աշխատանքին հատուկ հատկանիշ է համարվում երեխաների ակտիվությունը և ուսուցչի օգնության բացակայությունը: Այս տեսակետը անարդյունավետ է և ճիշտ չէ: Դրա վրա հիմնվելով՝ ուսուցիչը բացառում է համագործակցության հնարավորությունը նաև այն իրավիճակներում, երբ կա դրա անհրաժեշտությունը: Մանկավարժն իսկապես չի մասնակցում առաջադրանքի կատարմանը, բայց նա կազմակերպում է գործընթացը: Ինքնուրույն աշխատանքը միշտ ավարտվում է որևէ արդյունքով, քանի որ աշակերտը դա

կատարում է ինքնուրույն: Դրանց արժեքը և նշանակությունը ավելի ակնհայտ է դառնում համատեղ աշխատանքի արդյունքում ստացվածի հետ համեմատելիս: Աշխատանքի արդյունքում բացահայտվում է ոչ միայն գիտելիքների մակարդակը, այլ նաև դպրոցականի ինքնուրույնությունը, նրա գործունեության անհատական ոճը, ստեղծագործական և ոչ ստանդարտ մոտեցումը:

Գոյությունունիինքնուրույն աշխատանքի 4 տեսակ.

- ինքնուրույն աշխատանքն ըստ օրինակի.
- ստեղծագործական ինքնուրույն աշխատանք,
- փոփոխական ինքնուրույն աշխատանք,
- կառուցողական ինքնուրույն աշխատանք:

Ստեղծագործական ինքնուրույն աշխատանքը կարելի է օգտագործել առաջադրանքների, հավասարումների, սխեմաների, գրաֆիկների ամրապնդման, կազմման, նորնյութի բացատրության ժամանակ:

Փոփոխական ինքնուրույն աշխատանքը կարել է օգտագործել տարբեր միջոցներով առաջադրանքների կատարման, հարմար եղանակներով արտահայտությունների նշանակության ընտրության ժամանակ:

Շատ կարևոր է երեխաներին հանձնարարել տրամաբանական բնույթիինքնուրույն աշխատանքների կատարում. կախարդական խորանարդների, շղթաների կազմում, պատկերավոր առաջադրանքներ :

Կրտսեր դասարանների աշակերտների հետ նպատակահարմար է օգտագործել երկու հիմնական տարբերակման չափանիշ՝ ուսուցում և ուսուցողականություն: Տարբերակման միջոցները, որոնք կարող են օգտագործվել մաթեմատիկայի դասաժամին՝ դասավանդվող նյութի ամրապնդման փուլում, առաջարկվում է ուցումնական առաջադրանքի բովանդակության հետևյալ տարբերակումը.

- ստեղծագործության մակարդակով,
- դժվարությունների ծավալով,
- սովորողների ինքնուրույնության աստիճանով,
- սովորողներինօգնելու բնույթով,
- ուսումնական գործողություններիձևով:

Տարբերակման միջոցները կարող են համապատասխանեցվել միմյանց հետ, իսկ առաջադրանքները աշակերտներին պետք է հանձնարարվի ընտրությամբ:

1. Ուսումնական առաջադրանքների տարբերակումն ըստ ստեղծագործական մակարդակի.

Այս միջոցը ենթադրում է տարբերություններ աշակերտների ճանաչողական գործունեության բնույթում, որը կարող է լինել վերարտադրողական կամ արտադրողական:

Տարբերակված աշխատանքը կազմակերպվում է տարբեր եղանակներով: Հաճախ ավելի ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին (1-ին խումբ) առաջարկվում է վերարտադրողական առաջադրանքներ, իսկմիջին (2-րդ խումբ) և բարձր (3-րդ խումբ) առաջադիմություն ունեցող աշակերտներին՝ ստեղծագործական առաջադրանքներ: Արտադրողական առաջադրանքներ կարելի է հանձնարարել բոլոր աշակերտներին: Բայց միևնույն ժամանակ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին հանձնարարվում են ստեղծագործական տարրերով առաջադրանքներ, որտեղ կարելի է օգտագործել համանման իրավիճակներում կիրառված գիտելիքներ, իսկմյուսներիննոր իրավիճակներում գիտելիքներ պահանջող առաջադրանքներ:

Արտադրողական առաջադրանքների օգտագործմամբ տարբերակված աշխատանքների օրինակներ.

81 - 29 + 27 400 + 200 + 300 - 100

72 : 9 - 3 400 + 200 + 30 - 100

8 : 6 - 7:8 27 : 3 - 2 : 6 - 9

84 - 9 - 8 54 + 6 - 3 - 72 : 8

Հանձնարարություն 1-ին խմբի համար.

Հիշել արտահայտություններում գործողությունների կատարման հաջորդականությունը և հաշվել:

Հանձնարարություն 2-րդ խմբի համար.

Արտահայտությունները բաժանել երեք խմբի: Գտնել արտահայտության արժեքը:

Հանձնարարություն 3-րդ խմբի համար.

Կատարել 2-րդ խմբի համար նախատեսված հանձնարարությունը: Մտածել, ի՞նչ եղանակով կարելի է արտահայտությունները բաժանել 2 խմբի:

2. Ուսումնական առաջադրանքների տարբերակումն ըստ բարդության աստիճանի:

Տարբերակման այս տեսակը ենթադրում է ավելի պատրաստված աշակերտների համար առաջադրանքների բարդացման հետևյալ եղանակները.

- մաթեմատիկական նյութի բարդացում,
- արտահայտության մեջ գործողությունների քանակի ավելացում,
- համեմատությունների կատարում ի հավելումն հիմնական առաջադրանքի,
- ուղիղ առաջադրանքի փոարեն հակադարձի կատարում,
- թվերի փոխարեն պայմանական նշանների կիրառում:

Օր.՝գտնել արտահայտության արժեքը:

1-ին խումբ.

28 : 2 + 3

45 - 7 - 3

2-րդ խումբ.

28 : 2 + 56 : 8

5 - 9 - 7 – 3

3-րդ խումբ.

28 : 2 + (50 + 6) : 8 • (35 - 30) - 9 - 7 – 3

3. Առաջադրանքի տարբերակում ըստուսումնական նյութի ծավալի:

Տարբերակման այս միջոցը ենթադրում է, որ 2-րդ և 3-րդ խմբի աշակերտները բացի հիմնականից կատարում են նաև լրացուցիչ առաջադրանք, որը տեսակով նման է հիմնականին:

Որպես կանոն, ըստ ծավալի տարբերակումը համապատասխանում է տարբերակման մյուս մեթոդներին:

Օրինակ 1: Հիմանկան առաջադրանք. « Գտնել արտահայտության արժեքը»:

15 - 7 12 - 6

13 - 8 16 - 9

14 - 9 11 - 8

Լրացուցիչ առաջադրանք. «Գտնել յուրաքանրյուր սյունակի պատասխանների գումարը»:

Սովորողների մտավոր գործունեության ակտիվացման համար ուսումնական գործընթացում կարևոր տեղ է զբաղեցնում դասագրքի և ուսումնական գրականության վրա տարված աշխատանքը: Դասի ժամանակ դասագիրքը ոչ միայն օգնողմիջոց է, որըթույլ է տալիս փոքրինչ տարրաբնույթ դարձնել պարապմունքը, այլ առաջին հերթին հանդիսանում է աշակերտի գիտելիքների գլխավոր աղբյուր:

Դասագիրքը հանդիսանում է ուսուցանվող նյութի ամրապնդման արդյունավետ միջոց: Դասագրքի ընթերցումը ձևավորում է ճիշտ, գրագետ խոսք, սովորեցնում է տրամաբանական մտածողություն:

Որպեսզի ինքնուրույն աշխատանքը դրական արդյունք տա, օգնի աշակերտներին յուրացնել գիտելիքները և ձեռք բերել կարողություններ, նպաստի նրանց կարողությունների զարգացմանը, ուսուցչին անհրաժեշտ է տիրապետել որոշակի պայմանների, որոնք ձևավորվել են ուսումնական պրակտիկայում:

Յուրաքանրյուրի համար անհրաժեշտ է կարողանալ ինքնուրույն գիտելիքներձեռք բերել, տիրապետել որոշակի կարողությունների, կարողանալ կիրառել դրանք կյանքում: Գոյությունունիինքնուրույնաշխատանքին առաջադրվող պահանջներ.

- աշակերտներին սովորեցնելինքնուրույն աշխատանքների ճիշտ, ռացիոնալ կիրառմանը,
- հետևել, որպեսզի աշակերտների մոտ չառաջանա այդ առաջադրանքների հետ կապված ծանրաբեռնվածություն,
- դասի ընթացքում ավելի արդյունավետ օգտագործել ժամանակը:

Յուրաքանչյուր դաս հանդիսանում է ուսուցչի և աշակերտի ստեղծագործություն: Դրա անցկացման պատրաստի բաղադրատոմս գոյությունչունի, միշտտեղ է մնում իմպրովիզացիայի համար:

Մանկավարժական գործունեության արդյունավետության ապահովման կարևորագույն միջոց է սովորողների ձեռքբերած գիտելիքների սիստեմատիկ ստուգումնու գնահատումը: Ցանկացած ուսումնական գործունեության գնահատման հիմքումստուգումն է, որն իրականացվում է մի շարք մանկավարժական մեթոդների և հնարների միջոցով, որոնքընտրվում են դասի նպատակից ելնելով: Սակայն պետք է նկատի ունենալ, որստուգումնիրենից ներկայացնում է ոչ թե աշակերտների գիտելիքների միավորային նկարագիրը, այլ մի բարդ գործընթաց է, որնիրմեջունի միախառնված մի շարք գործողություններ՝ ուղղված միևնույն նպատակին:

Գնահատումն ուսուցման գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է, ինչն էլ ապահովում է առարկայական չափորոշիչների ու ծրագրերի կատարումը, նպաստում սովորողների ինքնագնահատմանը և ինքնազարգացմանը: Գնահատման միջոցով պարզվում է գիտելիքների, կարողությունների, հմտությունների մակարդակը: Դրա հիման վրա իրականացվում է ուսումնական գործընթացի կատարելագործումը և ուսման որակի վերահսկումը:

Գնահատման համակարգի սկզբունքները պետք է լինեն՝

- արդարությունը
- հուսալիությունը
- անկողմնակալությունը
- հավաստիությունը
- հիմնավորվածությունը
- մատչելիությունը:

Սովորողինտրվող ցանկացած ուսումնական առաջադրանք պետք է գնահատվի ուսուցչիկողմից՝ անկախ գնահատման ձևից, որը պաըմանավորված է ուսումանական առաջադրանքի նպատակից, տեսակից:

Ինքնուրույն աշխատանքները համարվում են սովորողի ընթացիկ առաջադիմությունը ստուգելու, գնահատելու յուրահատուկ ձև:

Ինքնուրույն աշխատանքի գնահատումն իրականցվում է դրանց ստուգման արդյունքում, իսկ այդ աշխատանքների գնահատման կարգը մշակվում է և հրապարակվում գնահատումից առաջ՝ գնահատումն իրականցնող անձի կողմից:

Գնահատման արդյունքն արտահայտվում է պաշտոնապես ընդունված միավորների սանդղակով՝գնահատականներով: Գնահատումն իրականացվում է ,10ե միավորային սանդղակով:

Որպես կանոն, ինքնուրույն աշխատանքների գնահատման արդյունքները գրանցվում են աշակերտի թղթապանակում: Ինքնուրույն աշխատանքների ստուգումն իրականացնելիս ուսուցիչըհիմնվում է իրկողմից նախօրոք մշակած նորմերի վրա, որոնքկողմնորոշում են աշխատանքի ողջ ընթացքը, հիմնական ուշադրությունը դրվում է հենակետային, ստուգման ենթակա գիտելիքների ճիշտ կատարելուն(չանտեսելով մնացածը):

Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը

Տարբերվում են աշակերտների ինքնուրույնության 4 մակարդակ.

- Առաջին մակարդակ՝ պարզ վերարտադրողական ինքնուրույնությունն է, երբ սովորողներնիրենցձեռքի տակ ունենալով պատրաստի նմուշը և իմանալով կանոնները ինքնուրույնլուծում են առաջադրանքները:

- Երկրորդ մակարդակ՝ընտրովիինքնուրույնությունն է, երբ սովորողը մի շարք կանոնների օրինակներից, սահմանումներից կարողանում է ընտրել մեկը և կիրառել այն նոր առաջադրանքների ինքնուրույն կատարման գործընթացում:
- Երրորդ մակարդակ՝ մասնակի որոնողական ինքնուրույնությունն է, երբ աշակերտը կարողանում է կատարել ինքնավերահսկում և ինքնագնահատում, կարողանում է ինքնուրույն պլանավորել և կազմակերպել իրինքնուրույն գործունեությունը:
- Չորրորդ մակարդակ՝ ստեղծագործական – հետազոտական գործունեությունն է:

Ինչպե՞ս կազմակերպել տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքները

1. Կազմակերպչական՝ աշխատանքային միջավայրի նախապատրաստում (աշխատանքի ընթացքում օգտագործվող նյութերի բաշխու՝ բառարաններ, հուշաթերթիկներ):
2. Նախապատրաստական՝ երեխաներին սովորեցնում է աշխատանքային կարգուկանոն (հանգիստ նստել, չխանգարել ընկերներին, պահպանել լռություն և այլն):
3. Կողմնորոշիչ՝ աշակերտները ծանոթանում են առաջադրանքի բովանդակութանը (դիտարկում է, թե ինչ է տրված, ինչպետք է կատարել, ինչ գիտելիքներ և գործողութուններ պահանջվում աշխատանքի կատարման համար):
4. Հիմնական փուլ՝ այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանք:
5. Ամփոփիչ փուլ:
6. Ստուգիչ փուլ:

Ինքնուրույն աշխատանքները դասակարգվում են ըստ՝

- ուսումնական նպատակների՝

1. հիմնարար գիտելիքների կրկնությանը և նորնյութի ընկալմանը նախապատրաստող,

2. նորնյութի ուումնասիրությանը նպաստող,
3. գիտելիքները համակարգող,
4. որոշակի կարողություններ զարգացնող,
5. ստուգող, վերահսկող:

- Ճանաչողական գործունեության բնույթի՝

1. ըստ տրված նմուշի
2. կառուցողական
3. ստեղծագործական – հետազոտական:

Ըստ կազմակերպման ձևի՝

1. համընդհանուր(ֆրոնտալ)
2. խմբային
3. անհատական:

Ըստ դիդակտիկ նյութերի գործածության՝

- աշխատանք դասագրքով, տեղեկատու գրականության շուրջ,
- շարադրություններ,
- դիտումներ և գործնական աշխատանքներ,
- աշխատանք՝ բաշխիչ նյութերի կիրառմամբ,
- գրաֆիկական աշխատանքներ,
- ինքնուրույն աշխատանքներ, որոնք կապված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ:

Ըստ կատարման տեղի՝

- դասարանում
- արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ
- տանը:

Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ ինքնուրույն աշխատանք կատարելու համար

Պայմանները

- Հոգեբանական պատրաստվածություն՝ աշխատանքը կատարելու համար հոգեբանորեն անհրաժեշտ իրավիճակ ստեղծել:
- Երեխան պետք է յուրացնի ինքնավերլուծության և ինքնագնահատման տարրական կարողություններ:
- Երեխան պետք է յուրացնի ինքնուրույն աշխատանքի կատարման քայլերը և իր ուսումնական գործողությունների ընդհանուր արդյունքը կանխատեսելու կարողությունները:
- Առաջադրանքի կատարման համար ցուցաբերի նախաձեռնողականություն և ստեղծագործական կարողություններ:

Ի՞նչ հարցեր պետք է մտահոգեն ուսուցչին

1. սովորողների աշխատանքի տեմպը,
2. առաջադրանքներն աստիճանաբար բարդացնելու հանգամանքը,
3. առաջադրանքները պետք է առաջացնեն հետաքրքրություն,
4. նախապես պատրաստել առաջադրանք՝ արագ աշխատող աշակերտների համար,
5. տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի պատրաստվածության մակարդակը,
6. առաջադրել առաջադրանքները, որոնց կատարման ընթացքում աշակերտները գիտելիքները կիրառեն նոր իրավիճակներում,
7. յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ուհմտությունները, որոնք անհրաժեշտ են ձևակերպել և ամրապնդել:

Ինքնուրույն ուսումնական աշխատանքների պլանավորումը

- Անհատական քարտեր,
- Գրառումներ՝ գրատախտակի,
- Շերտավորված առաջադրանքներ՝ գրատախտակին,
- Համալիր քարտեր (ունենան և՛ օգնության, և՛ բարդացման տարրեր)

Գոյությունունի երկու տեսակ պլանավորում՝

1. Հեռանկարային՝որոշում են գործնական աշխատանքները, էքսկուրսիաները, գրավոր աշխատանքները և այլն:
2. Ընթացիկ՝ մշակվում է առանձին դասերի ընթացքում:

Ինքնուրույն աշխատանքը պլանավորելիս անհրաժեշտ է.

1. Անպայման որոշել դրա տեղը դասի կառուցվածքում,
2. Որոշել ծավալը,
3. Նախատեսել աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները,
4. Աշխատանքը պլանավորել ըստ ձևի և բովանդակության,
5. Պլանավորել տրամադրվող աշխատանքի ժամաքանակը(ոչ ավելի, քան 15-20ր),
6. Ընտրել համապատասխան դիդակտիկ նյութեր,
7. Որոշելինքնուրույն աշխատանքի ստուգման և ինքնաստուգման միջոցները:

Ինքնուրույն աշխատանքների ստուգման ձևերը

Առաջին.

- Ուսուցիչնինքըչի հաղորդում նորնյութը, այլ կազմակերպում է այդ նորնյութիշուրջինքնուրույն աշխատանք:

Երկրորդ.

- Նորնյութի ուսումնասիրությունը սկսվում է նորնյութի բովանդակության հետ կապված սովորողներին տեղեկատվության հաղորդումով և իրենց հայտի երևույթների մաին զրույցով, (դա կատարվում է այն դեպքում, երբ այդ ինքնուրույն աշխատանքին նախորդում են բնության երևույթների դիտարկումները, գործնական աշխատանքները, էքսկուրսիաները, գրքերի ամսագրերի ընթերցանությունը և այլն):

Երրորդ.

- Ուսուցիչը կանգ է առնում բուննյութի հիմնական հարցերի վրա, իսկսովորողները մեծ ծավալով նյութն ուսումնասիրում են ինքնուրույն:

Չորրորդ.

- Ուսուցիչը կազմակերպում է միայն խթանման փուլը, իսկսովորողները նրա ղեկավարությամբ ինքնուրույն ուսումնասիրում են ծրագրային հարցերը:

Ինքնուրույն աշխատանքի ստուգման մի շարք հնարներ

- Ինքնուրույն աշխատանքներն ուսուցիչը հավաքում է, տուգում ճշտությունը,հաջորդ օրը հատնում արդյունքները և քննարկում:
- Ավելի խոր անհատական ստուգումը ենթադրում է մեկից երեք աշակերտների բանավոր հարցում, որի ընթացքում մուսներըհետևում են պատասխաններին, անհրաժեշտության դեպքում՝իրենց աշխատանքներում կատարում ճշտումներ և լրացումներ:
- Ընտրովիստուգում՝ստուգումը կատարում է մեկ աշակերտի միջոցով՝ գրատախտակի մոտ, մյուսները դրա հիման վրա ստուգում են իրենց աշխատանքները:

- Փոխադարձ ստուգում՝ մեկը մյուսիինքնուրույն աշխատանքն է ստուգում՝սխալները շտկելով:
- Ինքնուրույն աշխատանքից հետոուսուցիչը պատասխանները գրում է գրատախտակին: Ըստ այդ պատասխանների ստուգում են իրենց կատարած աշխատանքը:

Եզրակացություն

Այս աշխատանքի արդյունքում ևս մեկ անգամ համոզվեցի, թե որքան կարևոր դեր և նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը: Յուրաքանչյուրի համար կարևոր է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելը, որոշակի կարողությունների տիրապետելը, կարողանալ կիրառել դրանք կյանքում: Ինքնուրույն աշխատանքները համարվում են սովորողի ընթացիկ առաջադիմությունը ստուգելու, գնահատելու յուրահատուկ ձև: Եվ ինչպես նշել է Ա.Բահաթրյանը. «Ուսուցիչը միշտ պիտի աշխատի զարգացնել աշակերտների ինքնագործունեությունը»:

Գրականության ցանկ

1. 1.Гомаюнов К. К., «Самостоятельная работа студентов. Методические рекаминдации преоподавателям. Ленинград, 1988
2. ЗимняяИ. А., «Педагогическаяпсихология», Ростов-на-Дону, 1997
3. Յ. Ա. Կոմենսկի, «Լույս» հր., 1957, նաև Յու. Ամիրջանյան, ժամանակակից դիդակտիկա, «Լույս», հր., Երևան, 1947:
4. Յան Ամոս Կոմենսկի «Մեծ դիդակտիկա», Երևան, 1962, (էջ 126)
5. Կ. Դ. Ուշինսկի Մանկավարժական ընտիր երկեր, Լույս հր., Երևան, 1997;